ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՐԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արարատ համայնք, Ք. Արարատ, Շահումյան 34,
Հեռ. 060-88-55-55, ararat.municipality@gmail.com

N 3287

Ա/Ձ ԱՐՄԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ

19 դեկտեմբեր 2023թ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Ինչպես գիտեք Ավշարի համայնքապետարանի /Պատվիրատու/ և Ա/Ձ Արմեն Սեդրակյանի /Կատարող/ միջև 2021թ-ի սեպտեմբերի 6-ին կնքված N ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 գնման պայմանագրով դուք պարտավորվել էք իրականացնել «Ավշար համայնքում նոր կառուցվող մանկապարտեզի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման պարտավորությունը»: Սակայն տևական ժամանակ է չեք կատարում ձեր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները, ինչի հետևանքով Արարատի համայնքապետարանը, որպես պատվիրատուի իրավահաջորդ /այսուհետ Պատվիրատու/ հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծում է Ավշարի համայնքապետարանի և Ա/Ձ Արմեն Սեդրակյանի միջև 2021թ-ի սեպտեմբերի 6-ին կնքված N ԱՄԱՀ-ԳՀԾՁԲ-21/11 գնման պայմանագիրը և պատշաճ ծանուցումն իրականացնելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման Կարգի» 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք, որ Ա/Ձ Արմեն Սեդրակյանի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները /տուժանքները/ կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված համապատասխանաբար 240.000 ՀՀ դրամ և 80.000 ՀՀ դրամ գումարները՝ Արարատի համայնքապետարանին փոխանցելու նպատակով:

Կքննարկվի նաև Ա/Ձ Արմեն Սեդրակյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող ընկերությունների ցուցակում ներառելու հարցը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԱՏ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ Կ. Մելքոնյան